ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> հուլիսի 2026թ. N ՄՈ/450 -Ա

ք. Արմավիր

«ՋՐԱՌԱՏԻ ԹԱԹՈՒԼ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԵԼԱՆՅԱ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մելանյա Համբարյանի 2026 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելանյա Համբարյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մելանյա Համբարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ժիրայր Վարդանյանին:
3. «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ժիրայր Վարդանյանի վարձատրությունը 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մելանյա Համբարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվական օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 29028401179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**